ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ՆԱԽԱԲԱՆ
- ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍԽԵՄԱՆ
- ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ
- ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԱԴՐՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ
- ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ
- ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ, ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ
- ԴՊՐՈՑԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
- ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ
- ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
- ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
- ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
- ԴՊՐՈՑԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԵՐԸ
- ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
- ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ
- ԸՆՏԱՆԻՔ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ
- ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՀՆԱՐԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ
- ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
- ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Նախաբան

Կրթությունն այն է, ինչ մնում է
սովորածը մոռանալուց հետո

Ա. Էյնշտեյն

Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու ու սերունդներին փոխանցելու համար:

Համաշխարհային արդի զարգացումն այսօր իր անմիջական ներգործությունն է ունենում կրթության համակարգի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ: Աճում է կրթության դերը: Կրթությունը վերաճում է հզոր մի գործոնի, ինչը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի գնահատմանն ու արժևորմանը՝ զարգացնելով հանդուրժողականության, փոխըմբռման, համագործակցության և այլ արժեքային որակներ: Կրթությունը բազմադարյան հարուստ փորձ ունի նաև Հայաստանում և դիտվել է՝ որպես ազգային ինքնուրույնության դրսևորման և գոյապահպանման կարևորագույն գործոն:

ՀՀ Լոռու մարզի<< Ջիլիզայի Մուրադ Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի զարգացման 2023-2028թ.թ. Զարգացման ծրագիրը կազմվել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի և այլ իրավական ակտերի համապատասխան՝ հաշվի առնելով դպրոցի և մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները և դրանցում առկա հիմնախնդիրները:

Զարգացման ծրագիրը դպրոցի ռազմավարական փաստաթուղթն է, որով պլանավորվում է դպրոցի աշխատանքը:

ՀԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍԽԵՄԱՆ

1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՊԱՏԱԿԱԴՐՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ
3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ
4. ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ
5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՏՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՀՆԱՐԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ
6. ՀԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՀԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
7. ԴՊՐՈՑԻ ՀԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Առաքելություն

Կարևոր և պատասխանատու գործ է դպրոցի առաքելության ճիշտ
կազմակերպումը, որի համար խիստ կարևոր է կրթական գործընթացում քայլել ժամանակի հետ: Որակյալ կրթություն ստանալու համար անհրաժեշտ է ոչ միայն կրթական միջավայրի ապահովում, այլև համապատասխան միջոցներ և միջավայր / նաև շենքային պայմաններ/: Դպրոցը պետք է նպաստի վաղվա արժանապատիվ անհատի ձևավորմանը, օժտված հայրենասիրությամբ, բարձր բարոյականությամբ, ինքնադրսևորմամբ, գնահատող համամարդկային արժեքները, բայց միաժամանակ՝ հավատարիմ իր ազգային արժեքներին և ավանդույթներին:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ Լոռու մարզի Ջիլիզայի Մուրադ Մուրադյանի անվան միջնակարգ դպրոցը գհործում է Ալավերդի խոշորացված համայնքի Ջիլիզա բնակավայր, փողոց 1, շենք 12 հասցեում: Դպրոցը հիմադրվել է 1930 թվականին: Գործել է մինչև 1978 թվականը: Վերաբացվել է 1990 թվականին՝ որպես ճոճկանի միջնակարգ դպրոցին կից տարրական դասարան: Այնուհետև դարձել է ութամյա: 2001թ. մարտի 31-ի թիվ 262 որոշումով ՀՀ Լոռու մարզի Ջիլիզա գյուղի 8-ամյա դպրոցը վերակազմակերպվել է ՀՀ Լոռու մարզի Ջիլիզայի միջնակարգ դպրոցի: 2011թվականի նոյեմբերի 22-ի թիվ 376Ա որոշմամբ ՀՀ Լոռու մարզի Ջիլիզայի միջնակարգ դպրոցը անվանակոչվել է բժշկական ծառայության կապիտան, արցախյան ազատամարտի մասնակից Մուրադ Մուրադյանի անունով և այժմ կոչվում է ,,ՀՀ Լոռու մարզի Ջիլիզայի Մուրադ Մուրադյանի անվան միջնակլարգ դպրոց,,ՊՈԱԿ; Դպրոցը ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, Կրթության, Հանրակրթության և ՊՈԱԿ-ների մասին օրենքներով և այլ իրավական ակտերով: Դպրոցում սովորում է 14 աշակերտ: Դպրոցն ունի 13 աշխատակից, որից՝ 2-ը՝ վարչական, 7-ը ՝ ուսուցիչ՝ բարձրագույն կրթությամբ:ՈՒսումնաօժանդակ անձնակազմ՝ 4 աշխատակից: Դպրոցը միահերթ է և աշխատում է հնգօրյա աշխատանքային շաբաթով: Տեղակայված է վարչական շենքում, ունի 5 դասասենյակ , 1 ուսուցչանոց և ճաշարան: Դպրոցը չունի նկուղ և ապաստարան:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԱԴՐՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Ուսումնական հաստատության գործունեության վերլուծությունը կատարել և այդ
վերլուծության հիման վրա սահմանվել են նպատակներ՝ ըստ հետևյալ ոլորտների.

•Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան:
•Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը:
•Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը:
•Կառավարման և խորհրդակցական մարմինները:
•Աշակերտական համակազմը:
•Մանկավարժական համակազմը:
•Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառուկազմակերպությունների հետ:
•Ուսումնական միջավայրը:
•Կրթության որակը:
•Նորագույն տեխնոլոգիաները և նորարարությունները:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան	
ՈՒՆի վերանորոգված դասասենյակներ և ճաշարան: Առկա են եվրոպատուհաններ: Ջեռուցվում է հոսանքով, և ապահովվում է ջերմային ռեժիմը:	Դպրոցը գտնվում է վարչական շենքում : Չունի ռազմագիտության , համակարգչային դասասենյակներ, լաբորատորիաներ, մարզադահլիճ: Դասասենյակների մակերեսները միանման են, ինչը փոքր է օրենքով թույլատրելի չափերից:
Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը	
Դպրոցը ֆինանսավորվում է պետական բյուջեից, որն իրականացվում է կանոնավոր և ժամանակին	Դպրոցը գտնվելով վարչական շենքում և սահմանափակվելով ընդամենը 5 դասասենյակով և 1 ուսուցչանոցով՝, չի կարողանում ծախսել դպրոցի բյուջեում տնտեսված գումարը
Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը	
• Դպրոցում առկա են պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթեր. դրանք վարվում են պահանջվող կարգի համաձայն:	

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կառավարման և խորհրդակցական մարմինները	
• Դպրոցում գործում են. • Կառավարման/միացյալ/ խորհուրդ • Մանկավարժական խորհուրդ • Աշակերտական խորհուրդ • Ծնողական խորհուրդ • Մեթոդմիավորումներ	Ակտիվ չեն Աշակերտական և Ծնողական խորհուրդները:
Աշակերտական համակազմը Դպրոց	
Սովորում է 14 աշակերտ: ՈՒՆենք 4 դասարան՝ 2-ը՝ երկկոմպլեկտ:	Աշակերտների փոքր թվաքանակի պատճառով թույլ է մրցակցությունը:
Մանկավարժական համակազմը	
Ուսուցիչներն ունեն անհրաժեշտ բարձրագույն կրթություն: Պարբերաբար՝ ըստ ժամանակացույցի , ենթարկվում են պարտադիր ատեստավորման:	Տարակարգ ունեցող ուսուցիչներ չկան: Ժամանակակից մեթոդների, ՏՀՏ միջոցների ոչ լիարժեք տիրապետում: Ցածր աշխատավարձ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ	
Իրականացվում են դպրոց-ընտանիք փոխհամագործակցությունն ամրապնդող միջոցառումներ: Դպրոցի բոլոր խորհուրդները համագործակցում են միմյանց հետ: Դպրոցը համագործակցում է ԿԳՄՍ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, Լոռու մարզպետարանի, ԱԻՆ-ի, զորամասերի, ոստիկանության, համայնքապետարանի և այլ կառույցների հետ:	
Ուսումնական միջավայրը	
Դպրոցը ապահովված է դասագրքերով և անհրաժեշտ ուսումնական գրականությամբ:	Առկա է թափուր հաստիքների համալրման դժվարություն: Դպրոցը չունի մարզահրապարակ, մարզադահլիճ, լաբորատորիաներ:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կրթության որակը՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների	
Առավել բարելավել ուսման որակը, խթանել կարգապահությունը, խրախուսել ուսման առաջավորներին, կազմակերպել արտադասարանական մրցույթներ:	Պասիվ է ծնողների մասնակցությունը աշակերտների ուսումնառության գործում: Թույլ է դպրոց-ծնող կապը:
Տեխնոլոգիաներն ու նորարարությունները	
Դպրոցում առկա են համակարգիչներ, պրոյեկտոր, որոնց միջոցով անց են կացվում համակարգչային դասեր և թեմաների վերաբերյալ տեսանյութերի դիտում:	Դպրոցը չունի համակարգչային սենյակ:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դպրոցին վերապահված դերի պահպանման և արդյունավետ գործունեություն իրականացնելու
համար անհրաժեշտ է.

Անվտանգ և նպաստավոր պայմանների ստեղծում:

•Դպրոցի շենքի կառուցում:

•Ֆինանսական միջոցների նպատակային բաշխում և օգտագործում:

•Թափուր հաստիքների համալրում:

•Կրթությունը՝ որպես կարևորագույն բաղադրիչ դիտարկելու աշակերտների իմացություն:

•Ապահովել համապատասխան պայմաններ՝ ներառական կրթություն իրականացնելու համար :

•Նպաստել դպրոց-ընտանիք, դպրոց-համայնք կապի առավել սերտ համագործակցության:

•Դպրոցի կառավարման գործում ակտիվորեն ներգրավել դպրոցի

•խորհրդակցական մարմիններին, հատկապես՝ Ծնողական և Աշակերտական խորհուրդներին:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ, ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Սովորողների առողջության պահպանման նպատակով անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ,
որոնց իրագործման համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները.

1. Առողջ ապրելակերպը՝որպես առողջության գրավական: Համագործակցել բնակավայրի
բուժքրոջ և ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ:
2. Ոչ՝ ծխելուն և այլ վնասակար սովորույթներին:
3. Պահպանել հակահամաճարակային կանոնները:
4. Հետևողական լինել դպրոց մուտք գործող սննդի որակի նկատմամբ:
5. Հանձնարարել դասղեկներին, որ վերջիններս վերահսկեն և լինեն հետևողական՝
սովորողների ֆիզիկական և առողջական վիճակի ուսումնասիրության գործում:
6. ՆԶՊ ուսուցչի և դասղեկների հետ հաճախակի կազմակերպել կանխարգելիչ
միջոցառումներ՝ ուղղված արտակարգ իրավիճակներում պաշտպանվելու երեխաների
կարողությունների ձևավորմանը;

ԴՊՐՈՑԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի ֆինանսական միջոցներն ուղղված են դպրոցի ուսումնանյութական բազայի
հարստացմանը, սովորողների համար բարենպաստ և անվտանգ կրթական միջավայրի ստեղծմանը:

ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Դպրոցի կառավարման գործընթացը արդյունավետ իրականացնելու համար
անհրաժեշտ է համախումբ և միասնական աշխատանք՝ կրթական ոլորտի բոլոր օղակների
մասնակցությամբ:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դպրոցում գործում է Միացյալ կառավարման խորհուրդ: Պետք է էլ ավելի նպաստել
Խորհրդի դերի բարձրացմանը և տեսանելի դարձնել նրա աշխատանքը՝ ծրագրերի իրագործման
և վերահսկողության գործում:

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Սովորողների կրթության գործում խիստ կարևոր է ծնողների դերը: Ծնողական խորհրդին
կարևոր դեր է վերապահվում, այն է՝ աշխատանք ծնողների հետ, մասնակից դարձնել դպրոցի
հեռանկարային ծրագրերին, գործունեության աշխատանքներին: Կազմակերպել հանդիպումներ,
խորհրդատվություններ, օգնել նրանց՝ տիրապետել երեխայի դաստիրակության և կրթության,
մանկավարժական նրբություններին: Արդյունքում՝ կբարձրանա Ծնողական խորհրդի դերը, ինչը
կնպաստի դպրոց-ծնող կապի ամրապնդմանը:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դպրոցում հատկապես պետք է կարևորել Աշակերտական խորհրդի դերը՝ որպես
սովորողներին ավելի մոտ կանգնած կառույց: Այն ի զորու է առավել նպաստել աշակերտի
իրավագիտակցության բարձրացմանը, ինքնուրույն կարծիքի և պատշաճ վարքի դրսևորմանը:
Հասկանալ, որ որակյալ կրթությունն է պետության հիմքը:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

ՈՒսումնական գործընթացը հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է.

•ժամանակակից մեթոդներով առավել հետաքրքիր և հասանելի դարձնել դասը

•ուսումնասիրել մանկավարժական առաջավոր փորձը և ներդնել ամենօրյա
աշխատանքում

•սկսնակ ուսուցիչներին նախապատրաստել ատեստավորման,

•զարգացնել ուսուցիչների մասնագիտական կարողությունները և հմտություններ

•կազմակերպել բաց դասեր և դասալսումներ

•կազմակերպել փորձի փոխանակում

•կատարելագործել ուսուցիչների աշխատանքը կրթական կայքերի միջոցով /հեռավար
ուսուցմում, ՏՀՏ կիրառումը դասապրոցեսի ժամանակ/

ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2.1-ին մասի համաձայն՝ Հայաստանի
Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր
երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց
կրթության իրավունքի ճանաչումն ամրագրված է ՀՀ սահմանադրության 38-րդ հոդվածով, համաձայն
որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք»
Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր երեխա իրավունք ունի
ստանալու անհրաժեշտ կրթություն, որի համար անհրաժեշտ է բացահայտել
երեխայի կարողությունները, ապահովել բարոյահոգեբանական միջավայր, հավասար
հնարավորություններ ունենալու գիտակցություն, շենքային պայմանների և ուսումնական
նյութերի և կրթական ծրագրերի մատչելիության ապահովում:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ

Կրթության բնագավառի գերխնդիրն է որակյալ կրթության ապահովումը, որին հասնելու համար պետք է .

- ազգային գաղափարախոսության վրա հենված որակյալ ուսուցման կազմակերպում
- ազգային բարոյական նորմերով օժտված անհատի ձևավորում
- պետական կրթական չափորոշիչներով որոշված համապատասխան գիտելիքների մատուցում
- սովորողի՝ սեփական լեզվի, պատմության, մշակույթի, ազգային և համամարդկային արժեքների կրող լինելու գիտակցության ընկալում

ԸՆՏԱՆԻՔ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Սովորողի դաստիարակության հաջողությունը կախված է ընտանիք-դպրոց
համագործակցության արդյունավետությունից, որի նպատակն է

- Ձեռք բերել փոխադարձ վստահություն
- բարձրացնել ծնողների պատասխանատվությունը ուսուցման նկատմամբ
- ծնողներին ընդգրկել դպրոցի գործունեության մեջ
- հետևողական լինել և հայտնաբերել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողների ընտանիքների

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՀՆԱՐԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

	Գործողություններ	Կատարողները	Ժամանակացույցը	Հնարավոր ֆինանսական ծախսերը
1	2	3	4	5
1	Դպրոցում սանիտարահիգենիկ անհրաժեշտ պայմանների ապահովում (հակահրդեհային, անվտանգ սննդի, լուսային, ջերմային)	Տնօրեն, համայնքի համապատասխան բաժինների աշխատակիցներ, ուսուցիչներ, ծնողներ, սովորողներ, զինղեկ, դպրոցի տեխնիկական անձնակազմ:	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում՝ ըստ առաջնահերթությունների և ֆինանսներիբաշխման հնարավորությունների:	Դպրոցի բյուջեի միջոցներով
2	Ուսումնական հաստատության բարեկարգման աշխատանքներ	Տնօրեն, տեխ. անձնակազմ,	Ծրագրի իրականացման ընթացքում	Դպրոցի բյուջեի միջոցներով
3	Սովորողների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքներ	Տնօրեն, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման ընթացքում	
4	Ամենօրյա պայքար ծխելու և այլ վտանգավոր սովորույթների դեմ	Տնօրեն, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման ընթացքում	

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՀՆԱՐԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

5	Հնարավորինս բացառել անորակ սննդի մուտքը դպրոց	Տնօրեն, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման ընթացքում	
6	Հաճախակի կազմակերպել կանխարգելիչ միջոցառումներ՝ ուղղված դժբախտ պատահարներից պաշտպանվելու երեխաների կարողությունների ձևավորմանը	Տնօրեն, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման ընթացքում	
7	Բարեգործ-բարերարների, հովանավորների ներգրավման աշխատանքներ	Տնօրեն, խորհրդակցական մարմիններ	Ծրագրի իրականացման ընթացքում	
8	Սոցիալական ծրագրերի իրականացում	Տնօրեն	Ծրագրի իրականացման ընթացքում	

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՀՆԱՐԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

9	Ծնողների ակտիվ ներգրավվածության կազմակերպում	Տնօրեն, դասվարներ, դասղեկներ	Ծրագրի իրականացման ընթացքում	
10	Որակավորման տարակարգ չունեցող ուսուցիչներին համար ստեղծել պայմաններ որակավորման տարակարգի առաջին աստիճանի հասնելու համար	Տնօրեն	Ծրագրի իրականացման ընթացքում	
11	Ուսուցիչների կողմից սովորողների խրախուսման և ակտիվացման մեթոդների կիրառում	Տնօրեն, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման ընթացքում	
12	Գիտելիքների մատուցում պետական-կրթական չափորոշիչների համապատասխան	Տնօրեն, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման ընթացքում	
13	Ապահովել ծնողների տեղեկատվությամբ, կազմակերպել հանդիպումներ	Տնօրեն, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման ընթացքում	

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Չնայած դպրոցի Զարգացման ծրագիրը կազմվում է՝ հաշվի առնելով նպատակը և իրականացմանն ուղղված միջոցները և ուղղությունները, սակայն միանգամայն հնարավոր չէ կանխատեսել այդ ծրագրի իրականացման ընթացքում հնարավոր
առաջացող ռիսկերը: Հաշվի առնելով չնախատեսված արտաքին ռիսկային գործոնները , դրանից բխող, դպրոցի Զարգացման ծրագրին խոչնդոտող հնարավոր դժվարությունները՝ պետք է.

•դիմակայել ամուր միասնական աշխատանքով՝ ներգրավելով դպրոցի բոլոր
համապատասխան կառույցները

•նախատեսել որոշակի գումար՝ չնախատեսված ֆորսմաժորային իրավիճակների առաջանալու դեպքում ռիսկերը նվազագույնի հասցնելու համար

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՈՒՆԸ

Դպրոցի Զարգացման ծրագիրը ամբողջական փաստաթուղթ է, որում ներկայացվում է դպրոցի հեռանկարային գործունեությունը : Չնայած այն կազմելիս հաշվի են առնվում բոլոր հնարավոր խնդիրներն ու գործոնները, սակայն ընթացքում կարող է առաջանալ որոշակի փոփոխությունների ենթարկելու անհրաժեշտություն:

Վերահսկման ամենաարդյունավետ միջոցներից մեկը հնգամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են: Դրա համար անհրաժեշտ է.

•դպրոցի խորհրդի կողմից առնվազն տարեկան երկու անգամ դպրոցի տվյալ ուստարվա աշխատանքային ծրագրում ընդգրկված դպրոցի զարգացման ծրագրի դրույթների կատարողականների հաշվետվությունների քննարկումը և համապատասխան գնահատականների ամրագրում,

•դպրոցի խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրում,

•համայնքի և դպրոցի այլ շահառուների՝ դպրոցի Զարգացման ծրագր իրականացման աշխատանքներին կամ այդ շրջանակում կազմակերպված միջոցառումներին շարունակական ներգրավում:

•Զարգացման ծրագրի արդյունքների գնահատում,

•Զարգացման ծրագրի հաստատում մանկավարժական և կառավարման խորհուրդների կողմից:

•Յուրաքանչյուր ուստարվա սկզբին տարեկան աշխատանքային պլանի մշակում:

•Յուրաքանչյուր տարվա ավարտին ծրագրի վերանայում՝ ըստ ներքին գնահատման արդյունքների:

•Յուրաքանչյուր ուս, տարվա սկզբին վերանայված ծրագրի հաստատում մանկավարժական և կառավարման խորհուրդների կողմից: